*ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի նախագահ;*
*ՀՀ վարչապետ (2008-2014թթ.)*

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Խնդիրը, որն այսօր կներկայացնեմ, շատերին է մտահոգում և այն ոլորտներից է, որի վերաբերյալ տեսաբանները դեռևս չեն ձևավորել ընդհանրական մոտեցումներ: Վերլուծաբաններն ըստ էության համամիտ են, որ ժամանակակից պետական կառավարման համակարգերը ճգնաժամ են ապրում, բայց ինչպիսին պետք է լինի ելքը, միասնական մոտեցումներ այս պահին գոյություն չունեն: Հետևաբար, ինչ-ինչ եզրակացությունների հանգելու համար նպատակահարմար է խնդրին նայելտարբեր տեսանկյուններից, առաջին հերթին, նախ՝ ճիշտ ձևակերպելով պրոբլեմը և երկրորդ՝ դիտարկելով, թե, այնուամենայնիվ, ինչ ելքեր կան ստեղծված իրավիճակից:

Ամենատարածված տեսակետը, որն այսօր խիստ արդիական է, և որի շուրջ վերլուծաբանները համակարծիք են, հետևյալն է՝ ժամանակակից աշխարհը թևակոխել է պոպուլիզմի դարաշրջան, ինչը դրսևորվում է ամենուրեք, թեպետ հիմնականում դիտարկվում է Միացյալ Նահանգները, մասնավորապես Թրամփի ընտրություններն ու Թրամփի ֆենոմենը: Երկրորդը, որ դասակարգվում է որպես պոպուլիզմի դրսևորում, Brexit-ն է: Երրորդը՝ այն, ինչն այսօր տեղի է ունենում Եվրոպայում: Տեսնում ենք, որ նոր միգրացիոն ալիքի ֆոնին սուր քննադատության են արժանանում դասական քաղաքական կուսակցությունները, որոնք ադեկվատորեն չեն արձագանքում նոր մարտահրավերին և այդ ալիքի վրա ի հայտ են գալիս պոպուլիստական շարժումներ, որոնք ավելի հստակ են արտահայտում ժողովրդի տրամադրությունները, քան կառավարման այն բոլոր դասական համակարգերն ու մեխանիզմները, որոնք գոյություն ունեն:

Թեման, որ ներկայացրեցի, ակտիվորեն քննարկվում է զանգվածային լրատվության միջոցներում, վերլուծական կենտրոնների կողմից՝ սա մեկ հարթություն է:

Երկրորդ հարթությունը համաշխարհային մասշտաբով տեղի ունեցող իրադարձություններն են՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ երկբևեռ աշխարհը դարձավ միաբևեռ և խաղի կանոնները կտրուկ փոխվեցին, տեսաբանների միջավայրում բանավեճ ծայր առավ հարցերի շուրջ, թե ինչպիսինն էին նախկին աշխարհը և խաղի կանոնները նրանում և ինչպիսին պետք է լինի նոր աշխարհը: Հասկանալի է, որ անցումային փուլը ցավոտ էր, որովհետև բազմաթիվ սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրներ էին առաջ գալիս, որոնց դրսևորման արդյունքում տուժում էին մարդիկ, ինչն էլ, բնականաբար, հարուցում էր սուր քաղաքական քննարկումներ, թեպետ բանավեճը նոր աշխարհում համակեցության կանոնների շուրջ էր: Թեմայի վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր գրքեր լույս տեսան, իսկ հայտնիներից մեկը, որը բեսթսելեր դարձավ, Քիսինջերի գիրքն էր աշխարհակարգի մասին: Գրքում նա բացահայտում է պրոբլեմն էությամբ և ոչ թե ձևական դրսևորման մեջ: Չն ասելով նկատի ունեմ հետևյալը՝ երկբևեռ աշխարհում պոլեմիկան շատ քաղաքականացված էր, որի հիմքում ընկած էին աշխարհընկալման գաղափարախոսական տարբերությունները: Մեկ բևեռը փլուզվեց նաև այն պատճառով, որ

քարոզվող գաղափարախոսությունն արդյունավետ չէր և պարտվել էր մրցակցության մեջ, բայց վերլուծական շրջանակներում դեռևս իներցիայով շարունակվում էր գաղափարախոսական բանավեճը և դեռ փորձում էին ապացուցել, որ կապիտալիստական հասարակությանը բնորոշ կառավարման համակարգն ամենաարդյունավետն է, ամենաճիշտն է և այլն: Բանավիճող տեսաբաններն այդպես էլ չնկատեցին, որ իրականում աշխարհում փոխվել են բովանդակային և ոչ թե ձևական երևույթներ: Այդ հարցով բովանդակային քննարկումներն անհասանելի մնացին քաղաքական միջավայրի համար, ի հետևանս ինչի, պրոբլեմները սրվեցին, մինչդեռ Քիսինջերը փորձում էր հարցին գտնել բովանդակային պատասխան:

Կարևոր մեթոդաբանական գործիք է ձևի և բովանդակության տարբերությունն արձանագրելը, քննարկվող խնդրի էությունը մշտապես բացահայտել փորձելը: Առկա են բազմաթիվ ձևական մոտեցումներ բազմաթիվ ասպարեզներում, որոնք, ցավոք, չեն լցվում բովանդակությամբ: Շատ հաճախ ստեղծվում են արհեստական կառույցներ, կրկնօրինակվում են զարգացած երկրների կառավարման ձևերը նույնիսկ այն պարագայում, երբ բովանդակությամբ հետսովետականացող հասարակությունները դեռևս պատրաստ չեն: Պատրաստ չեն, որովհետև դեռևս չեն ձևավորվել այն հարաբերությունները, որոնց ձևերը ներդրվել են, բայց բովանդակությունը չկա:

Այդ մեկնակետից ելնելով, արձանագրենք, որ կա զարգացման երկու ճանապարհ: Մեկն էվոլյուցոն ճանապարհն է, որը բնորոշ է այսօրվա զարգացած, եվրոպական երկրներին: Դրանց էությունը նրանում է, որ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց են ձևավորվում համապատասխան կառավարման ձևերը: Ընդ որում, նոր ձևերը հեշտությամբ չէ, որ ներդրվում են, այլ լինում է իներցիոն գործընթաց, երբ հին համակարգն առժամանակ դիմադրում է, բայց քանի որ փոփոխությունները նոր օբյեկտիվ իրավահարաբերություններից են ծագում, նրանք պարտադրում են նաև կառավարման ձևերի տրանսֆորմացիա: Ձևի և բովանդակության մշտական ընդհանրությունը, միասնականությունն ապահովում է զարգացում էվոլյուցիոն ճանապարհով: Դասական հեղափոխության բանաձևը նույնպես այդպիսին է, եթե ձևի և բովանդակության միջև մեծ տարբերություն է առաջանում, իսկ առկա համակարգը փորձում է արհեստականորեն պահպանել կառավարման հին ձևերը, ապա դա բերում է շատ ավելի խորը ճգնաժամի ու հեղափոխական ցնցումների, որոնք, ըստ մասնագետների, շատ ավելի ցավոտ են լինում, քան եթե փոխակերպումն էվոլյուցիոն զարգացումով լիներ: Մենք քննարկումը սկսեցինք գլոբալ կառավարման համակարգից, ուր արդեն տեղի է ունեցել/ում նաև երրորդ փոփոխությունը. եթե անցյալում երկբևեռ աշխարհը դարձել էր միաբևեռ, ապա այսօր արդեն խոսում են, որ այն դարձել է բազմաբևեռ և այլևս մեկ կենտրոնից չէ, որ ղեկավարվում է: Իսկ եթե աշխարհը բազմաբևեռ է, ապա նաև կանոնները համապատասխանաբար պետք է փոխվեն, այդ թվում նաև համագործակցության, կառավարման, միջազգային հարաբերությունների, որպեսզի համապատասխանեն նոր իրողություններին: Այս խորապատկերին անդրադառնանք այն բանավեճին, որն ընթանում է ՄԱԿ-ի շրջանակներում, ուր սուր քննադատություն կա, թե ՄԱԿ-ն իր այսօրվա տեսքով չի համապատասխանում աշխարհում ստեղծված իրավիճակին, ուստի կառավարման ձևը պետք է փոխվի, մասնավորապես, նաև անվտանգության խորհրդի կառուցվածքը: Պնդումներ կան, թե անվտանգության խորհրդի կազմում պետք է ընդգրկվեն պետություններ, որոնք այնտեղ չեն եղել, որ Ռուսաստանին ընդհանրապես պետք է զրկել վետոյի իրավունքից, որովհետև չարաշահում է այդ իրավունքը, չի մտածում ընդհանրական խաղի կանոնների մասին, այլ օգտագործում է այդ իրավունքը միայն իր շահադիտական նպատակներից ելնելով: Մյուս քննադատությունը, որ հնչում է, հետևյալն է՝ ՄԱԿ-ում զարգացող երկրների ձայնը

բավարար չափով լսելի չէ, թեպետ այսօր աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների բնույթն այնպիսին է, որ նրանց տեսակետները պետք է հաշվի առնվեն:

Մյուս քննադատությունը՝ աշխարհը դարձել է շատ փոքր, փոխադարձ ազդեցությունները շատ մեծացել են, բայց սոցիալական լարվածությունն աշխարհում չի մեղմանում, տարբերությունը զարգացած և աղքատ երկրների միջև խորանում է: Հետևաբար, քանի որ այս իրավիճակն այլևս հանդուրժել չի կարելի, ուստի պետք է փոխել խաղի կանոնները համաշխարհային մասշտաբով, թեպետ՝ այստեղ էլ է առկա ճգնաժամ այն առումով, որ գործող կանոններն ամենևին էլ չեն նպաստում խնդրի լուծմանը, չեն առաջարկում լուծումներ:

Չորրորդ քննադատությունն այն է, որ կան գլոբալ մարտահրավերներ, մասնավորապես էկոլոգիական բնագավառում, որտեղ անհրաժեշտ է, որպեսզի ժամանակակից մարդկությունը հանդես գա մեկ ճակատով, քանի որ դա վերաբերում է ոչ միայն զարգացած, զարգացող, այլ բոլոր, այդ թվում՝ նաև աղքատ երկրներին: Ու թեպետ մարտահրավերները բոլորին հավասարաչափ են հարվածելու, սակայն այդ բնագավառում չկան ընդհանուր մոտեցումներ, իսկ որոշ երկրներ էլ համարում են, որ ընդհանրապես ոչ մի խնդիր էլ գոյություն չունի: Նկատի առնենք, որ հարցը քննարկում և որոշումներ են ընդունում քաղաքական դաշտի մարդիկ, որոնք կարող են հաշվի չառնել փաստերը և գիտական վերլուծությունները: Այստեղից էլ բխում է հինգերորդ քննադատական դրույթը, թե ժամանակակից կառավարման համակարգն այնպիսին է, որը հաշվի չի առնում գիտական հանգամանքները, գիտության փաստերը և որոշումներն էլ փաստերով ամրագրված չեն: Այս քննադատությունն առավել սուր է հնչում կառավարման քաղաքական համակարգերի նկատմամբ: Որոշում կայացնողները քաղաքական գործիչներ են, նրանց խնդիրը քաղաքական իշխանության ձևավորումն է, իսկ քաղաքական իշխանության որոշումները պետք է ամրագրվեն նորմատիվ ակտերով, որոնք դառնում են մեկնաբանության խնդիր. գիտնականները ներկայացնում են փաստեր, բայց թե դրանք որքանով կընդունվեն և կկիրառվեն, կախված է քաղաքական գործիչների տրամադրվածությունից: Կարող են ազդել շահային, գաղափարախոսական և բազմաթիվ այլ գործոններ և ըստ այդմ էլ մեկնաբանվել գիտության փաստերը: Դա էական շեղում է մտցնում էության և ձևի միջև, քանի որ բովանդակային լուծումներ չեն տրվում, որոնք պետք է ադեկվատ լինեն ծառացած մարտահրավերներին: Հաճախ ենք ականատես լինում, որ խնդիրները ոչ թե այս, այլ իշխանությունն ամրապնդելու, սեփական կուսակցության դերը, կշիռը հաջորդ ընտրություններում մեծացնելու, հաղթելու, ժողովրդի սիրտը շահելու սկզբունքով են մեկնաբանվում: Ուստի, վերջին շրջանում գիտնականները մեծ ուշադրություն են դարձնում այդ՝ պոպուլիզմ ասված երևույթին:

Այն սահմանող երեք հիմնարար սկզբունքի շուրջ առկա է համաձայնություն: Առաջինը՝ ժողովրդի անունից քաղաքական էլիտայի քննադատությունն է, թե այն չի արտահայտում ժողովրդի կամքը, ժողովրդի տրամադրությունները, ժողովրդի նպատակները: Սա էլիտայի ու ժողովրդի հակադրության սկզբունքն է, ինչի գործադրումը տեսանք ԱՄՆ-ում: Թրամփը եկավ ոչ քաղաքական դաշտից և տուրք տալով հասարակական տրամադրություններին, սուր քննադատության ենթարկեց քաղաքական էլիտային: Հասարակությունը հոգնել էր քաղաքական էլիտայից, որին ամբողջապես բաց քննադատությանը, բաց գործելաոճը, փոխադարձ մեղադրանքները բավականին խոցելի էին դարձել: Դա իր արտահայտությունը գտավ նաև մշակութային դաշտում, բազմաթիվ ֆիլմեր նկարահանվեցին, մեծ աուդիտորիաներ գրավվեցին, ինչը նպատակաուղղված էր բացահայտելու կառավարման համակարգի թերությունները: Արդյունքում հասարակության մեջ նեգատիվ վերաբերմունք ձևավորվեց էլիտայի նկատմամբ, թե

բոլորն էլ նույնն են՝ հանցագործ են, ծախված են, կոռումպացված են, պաշտոնն օգտագործում են անձնական իշխանությունն ամրապնդելու համար, ուստի ոչ մեկին էլ չենք հավատում՝ լինեն հանրապետականներ, թե դեմոկրատներ: Այս ֆոնին էլ, որը բավականին խորացել էր, ի հայտ եկավ նոր մարդ, ով ասաց՝ես այդ էլիտայից չեմ, բիզնեսից եմ, դրանք բոլորիս հոգնեցրել են և սկսեց ասել այն, ինչ ժողովուրդն էր ուզում լսել: Սա առաջին կետն է:

Երկրորդը՝ պոպուլիստները շատ հաճախ տուրք են տալիս հասարակական տրամադրություններին, նրանց հռետորիկան ու փաստարկներն էմոցիոնալ են, որոնք շատ հաճախ ավելի էֆեկտիվ ու ազդեցիկ են, քան գիտականորեն հիմնավորված մոտեցումները: Եթե դուք խարիզմատիկ եք ու կարողանում եք հանդես գալ հանրության համար ընդունելի էմոցիոնալ հռետորաբանությամբ, ապա, իմացեք, որ ձեր ձեռքի տակ է հայտնվել բոլոր պոպուլիստների ձեռքում շատ լավ աշխատող գործիք: Այս հարցում առկա է գիտական կոնսենսուս:

Երրորդը՝ հեշտ լուծումներ բարդ խնդիրներին. պոպուլիստները մշտապես հեշտ լուծումներ են առաջարկում, այնինչ հասարակական հարաբերությունների զարգացման հոլովույթում անընդհատ առաջանում են նոր իրողություններ, ու ակնհայտորեն դրսևորվում է, որ երևույթներն այդքան պարզունակ չեն, ավելի խորն են, ավելի բազմաշերտ և այդտեղ դյուրին լուծումներ պարզապես չկան: Բայց, քանի որ հասարակությունն առավել դյուրությամբ է ընկալում, ընդունում հեշտ ու պարզ լուծումների գաղափարը, ուստի պոպուլիստներն այդ գործիքը նույնպես օգտագործում են: Կոնցեպտը փորձում են ապրոբացնել Brexit-յան զարգացումներում: Brexit քարոզողներն ու կողմնակիցները հենց այս երեք պոպուլիստական սկզբունքներով ներկայացան հանրությանը և ստացան ձայների 51-ից ավելի տոկոսը: Բայց հաջորդ պահից արդեն ի հայտ եկան բազմաթիվ լրջագույն խնդիրներ, թե ինչպես է պետք իրականացնել գործընթացը և կատարել այն խոստումները, որ տրվում էին ընտրողներին: Պարզվեց, որ լուծումներն այդքան էլ պարզ չեն, իսկ ավելի ուշ այդ լրջագույն հարցերը ծառացան բանակցային խմբի առջև. դրանք բոլորը նեղ մասնագիտական լուծումներ պահանջող խնդիրներ են, տեխնիկական մակարդակի հասնող լուծումներ են անհրաժեշտ, որպեսզի արդեն սերտաճած տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, միգրացիոն և մնացյալ կոմպոնենտները մասնագիտորեն, ճշգրիտ վիրահատության ենթարկվեն և իրարից անցավ անջատվեն: Դա դեռևս չի ստացվում և այդ պատճառով էլ գործընթացը, խախտելով բոլոր ժամանակացույցերը, չի հաջողվում ավարտել: Ըստ երևույթին, դեռ երկար ժամանակ կպահանջվի, բայց արդեն փաստ է, որ մարդկանցից շատերը, ովքեր քվեարկել են Brexit-ի օգտին, փոշմանել են և հիմա պահանջում են նոր ռեֆերենդում: Իշխող քաղաքական ուժը, բնականաբար, չի կարող նման բան անել, որովհետև դա ինքնասպանության նման մի բան կլինի, եթե նորից գնան ռեֆերենդումի և պարզվի, որ մարդիկ փոշմանել են և այլևս չեն ուզում ցավոտ ճանապարհով բաժանվել ԵՄ-ից:

Այստեղ նորից հառնում է խնդիրը, թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից կառավարման համակարգը, որպեսզի ադեկվատորեն պատասխանի այն մարտահրավերներին, որոնք պահանջում են մասնագիտական մոտեցումներ և ոչ թե քաղաքական պոպուլիզմ: Լավագույն լուծումները գտել են էվոլյուցիոն ճանապարհով զարգացած երկրները՝ առնչվելով պրոբլեմին, լուծումներ որոնելիս վերանայել են ավանդական և դասական մոտեցումները: Դիտարկենք անցյալ դարասկզբի Միացյալ Նահանգների օրինակը. մեծ դեպրեսիա և մարդիկ տեսան, որ կառավարման համակարգը չի կարողացել երաշխավորել, որպեսզի այդպիսի խորը ճգնաժամը կանխատեսվի ու մեղմվեն հետճգնաժամային զարգացումները: Բայց այդ ամենը տեղի էր ունեցել, որովհետև, ինչպես քննադատներն էին ասում, վայրի կապիտալիզմ էր, մրցակցություն էր,

շուկայական հիմնական շարժառիթը շահույթի հետապնդումն էր, սոցիալական խնդիրներն ընդհանրապես հաշվի չէին առնվում հասարակական բազմապիսի հարաբերություններում և այլն: Կարևոր խնդիրները հաշվի չէին առնվում, իսկ վայրի կապիտալիզմի մղիչ ուժն ագահությունն է, մտայնությունը՝ հնարավորինս շատ: Շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցներն ասում էին, որ այսպես չի կարելի, վտանգավոր է, կպայթի և այլն, բայց վերլուծաբաններին ոչ մեկ բանի տեղ չէր դնում, իսկ հետո երբ փաստի առաջ կանգնեցին, սկսեցին մտածել, թե այդ խորը ճգնաժամի հետևանքներն ինչպես պետք է հաղթահարեն: Լուծումը, որ գտան, արժեթղթերի հանձնաժողովի ձևավորումն էր, որովհետև ճգնաժամը դրսևորվեց արժեթղթերի շուկայում, երբ մեկ ակնթարթում մարդիկ կորցնում էին հարստությունը: Քաղաքական գործիչներին պարզ դարձավ, որ գործ ունեն նեղ մասնագիտական ոլորտի հետ, որից բան չեն հասկանում և չգիտեն, թե դա ինչպես պետք է կառավարվի, ինչպես պետք է ռիսկերը բացահայտվեն, ով պետք է այդ ռիսկերը բացահայտի, ինչպես է պետք կանխարգելել այդօրինակ զարգացումները: Հստակորեն գիտակցվեց, որ հարցը քաղաքական դաշտում հնարավոր չէ լուծել, դա խիստ մասնագիտական գիտելիքներ պահանջող ոլորտ է և հանգեցին այնպիսի քաղաքական որոշման, որը հակասում էր քաղաքական կառավարման համակարգի ավանդույթներին: Հիմնական դասական տեսությունը նախատեսում է, որ օրենսդիր իշխանությունը, գործադիր իշխանությունը և դատական իշխանությունը տարանջատված են: Հակադրվելով այս մոտեցմանը, իրենք ստեղծեցին արժեթղթերի հանձնաժողով, որին տվեցին կվազի-դատական, կվազի-գործադիր, կվազի-օրենսդիր իշխանության լիազորություններ: Ըստ այդմ՝ իրենք նորմատիվներ էին ընդունում, իրենք վերահսկում, իրենք պատժում: Եվ ասացին ավելին՝ քաղաքական գործիչներն ու քաղաքական համակարգն իրավունք չունեն միջամտել, արժեթղթերի հանձնաժողովը պետք է ունենա հարաբերական անկախություն, պետք է գործի միայն և միայն մասնագիտական հանգամանքներից ելնելով: Արձանագրեցին նաև, որ խստագույնս արգելվում են քաղաքական ազդեցության փորձերը, ինչը չափազանց կարևոր է տնտեսական համակարգի կայունությունն ապահովելու համար: Կառավարման համակարգի ճգնաժամի հետևանքով ի հայտ եկավ նոր ինստիտուտ: Հաջորդ քայլն արվեց, երբ սկսեցին քննարկել կենտրոնական բանկերի աշխատանքը՝ հասկացան, որ իշխող քաղաքական ուժերը շատ հաճախ կենտրոնական բանկերն օգտագործում են արհեստական ձևով, ընտրական ցիկլերում նրանց որոշակի գործընթացներ պարտադրելով, երբ իշխող քաղաքական ուժին իր վերարտադրության համար անհրաժեշտ է, որպեսզի կենտրոնական բանկի քաղաքականությունը միտված լինի ոչ թե ֆինանսական բանկային համակարգի կայունության ապահովմանը, բնականոն գործունեությանը, այլ որպեսզի համահունչ լինի քաղաքական ընտրական ցիկլի տրամաբանությանը: Այդ դեպքերի համար էլ քաղաքական որոշում կայացվեց, որ կենտրոնական բանկերը նույնպես պետք է անկախ լինեն քաղաքական իշխանությունից, ուստի ԿԲ-ներն առանձնացվեցին քաղաքական իշխանությունից, որպեսզի ապահովվի նրանց անկախությունը քաղաքական ազդեցություններից: Ավելին՝ ֆիքսվեց, որ քաղաքական միջամտություններն արգելված են, ԿԲ-ները պետք է ընդունեն նեղ մասնագիտական, փաստարկված որոշումներ՝ առանց գաղափարախոսական, կուսակցական միջամտությունների, իսկ իշխանության խնդիրը պետք է լինի վերահսկել, որպեսզի միջամտություններ չլինեն: Այսպիսով, դասական կառավարման համակարգում սկսեցին առաջանալ այնպիսի ինստիտուտներ, իսկ դրանցից հետո էլ ի հայտ եկան արդեն այլ ինստիտուտներ, որոնք կառավարում էին մրցակցությունը շուկաներում: Սակայն պարզվեց, որ այդտեղ էլ է քաղաքական ազդեցություններից զերծ անկախ մասնագիտական մարմին անհրաժեշտ, որը պետք է զուտ մասնագիտական որոշումներ կայացնի: Այդպիսի կառույցների

կշիռն աստիճանաբար սկսեց մեծանալ: Դրա օգտին հիմնական փաստարկն այն է, որ արդի գլոբալ զարգացումների ժամանակներում մարդկային հարաբերություններում գոյություն ունեն ոլորտներ, որոնք պետք է կարգավորվեն ու կառավարվեն մասնագետների կողմից: Սակայն, մյուս կողմից առարկայանում է հարց՝ իսկ որտեղ է այդ եզրը, որտեղ են չափորոշիչները, որ այս կամ այն բնագավառը պետք է դուրս հանել քաղաքական ազդեցությունից, իսկ, ա՞յ, այն մյուսները, որպես հարաբերությունները կանոնակարգող համակարգեր, պետք է մնան քաղաքական գործիչների կառավարման տիրույթում: Սա ժամանակակից աշխարհի կառավարման համակարգի ձևի և բովանդակության առումով ֆունդամենտալ պրոբլեմներից մեկն է, որովհետև երբ գործ ունենք, ասենք, ավիացիայի հետ, ապա շատ վտանգավոր է ղեկավարվել քաղաքական գործիչների պոպուլիստական լոզունգներով, որովհետև մարդիկ պարզապես ինքնաթիռ չեն նստի, ավիավթարները կարող են ավելանալ և այլն: Ուստի առարկայացել է գիտակցումը, որ ավելի լավ է լսել մասնագետներին: Նույնը տեսնում ենք առողջապահության համակարգում. ձևավորվում են համաշխարհային ոչ-պետական կառույցներ, որոնք միջազգային ստանդարտներ են սահմանում, իսկ պետությունները ռեֆորմներ իրականացնելիս նկատի են առնում միջազգային այդ ստանդարտները: Տենդենցը հստակ է՝ հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում, իսկ դա աճման միտում ունի, ձևավորվում են հարաբերությունները լավագույնս կարգավորելու ստանդարտներ: Սա կարևոր, համեմատաբար նոր տրենդ է համաշխարհային կառավարման համակարգում, այն է՝ որոշակի խնդիրների լուծումը դուրս է բերվում քաղաքական դաշտից, բարձրացվում է անդրազգային մակարդակ ու սահմանվում են գործունեության հստակ ու արդյունավետ չափորոշիչներ:

Ավիացիայի բնագավառում ոչ ոք չի մտածում ազգային ստանդարտների մասին, բոլորը հասկանում են, որ դա աբսուրդ է, որ այդ ստանդարտները պետք է լինեն միջազգային և բոլորը պետք է նույն կանոններով շարժվեն: Նույնն է առողջապահության բնագավառում՝ անկախ նրանից, թե որ պետությունում ես ապրում, լավագույն ստանդարտներ կան մշակված, թե այս կամ այն հիվանդությունն ինչպես պետք է բուժվի, մանավանդ, որ հիվանդություններն ու վիրուսները տարածվում են ազգային սահմաններ չճանաչելով. այստեղ ևս միասին գործելն արդարացված է: Տրանսպորտային ոլորտում էլ միջազգային ստանդարտներ կան մշակված, որոնք ընդունելի են դառնում բոլորի համար: Ֆինանսական միջազգային ստանդարտները մշակվում են կառավարման ոչ-պետական ինստիտուտների կողմից, իսկ պետությունները դրանք ընդունում են ապրիորի: Միջազգային ֆինանսական հաշվետվությունները և միջազգային ֆինանսական ստանդարտները, որոնք մշտապես արդիականացվում են Լոնդոնում գտնվող կենտրոնական գրասենյակի պրոֆեսիոնալ աուդիտորների կողմից, ժամանակին առաջարկեցինք ապրիորի դնել հայաստանյան օրենսդրության հիմքում, որպեսզի, մասնավորապես, հարկային ոլորտում հաշվապահական հաշվառումն իրականացվի միջազգային ֆինանսական ստանդարտներով: Ինչո՞ւ էր դա կարևոր. Հայաստան էին գալիս միջազգային ներդրողներ, որոնք հաշվետվությունները կազմում էին միջազգային ստանդարտներին համապատասխան, իսկ դա շատ հաճախ կոնֆլիկտ էր առաջացնում, քանի որ Հայաստանի օրենսդրությունը հետ էր մնում միջազգային ստանդարտներից: Այդպիսի առաջին խոշոր ինստիտուցիոնալ ներդրողը HSBC բանկն էր, առաջնակարգ բանկ, ընդգրկված համաշխարհային ցանցում, որը չէր կարող Հայաստանի համար սպեցիֆիկ հայկական ստանդարտներով աշխատել: Իսկ մենք դեռ չէինք հասցրել սովետական ստանդարտներից անցնել անընդհատ ու օպերատիվ ընթացակարգերով արդիականացող միջազգային ստանդարտներին, հետևաբար, որոշեցինք հիմք ընդունել անդրազգային, ոչ-պետական կառույցի կողմից մշակվող միջազգային ստանդարտները: Սա ևս

մեկ օրինակ, տեսնել-համոզվելու համար, որ աշխարհով մեկ այնպիսի ֆունդամենտալ փոփոխություններ են տեղի ունենում և ի հայտ են գալիս այնպիսի կառույցներ, որոնց որոշումներն ավելի մեծ նշանակություն ունեն, քան ազգային պետությունների քաղաքական էլիտաների տրամադրությունները: Ես մատնանշեցի ավիացիան, առողջապահությունը, տրանսպորտը. այս ոլորտներում միջազգային կառավարման ու ստանդարտացման տենդենցներն այլևս ակնհայտ են, բայց այսօր են ակնհայտ, երկու դար առաջ այդ հարաբերությունները կարգավորվում էին պետությունների ներսում և եթե փորձում էին դուրս գալ պետության շրջանակներից, ապա դա առավելապես տեղի էր ունենում կամ պարտադրանքի կամ պայմանագրային համաձայնությունների միջոցով, պետությունների միջև պայմանագրերի ստորագրմամբ և այլն:

Հիմա արդեն գործ ունենք նոր երևույթի հետ, ինչը գալիս է փաստելու, որ երբ բովանդակային փոփոխություններ են տեղի ունենում, այդ փոփոխությունների և դրանց արտահայտման ձևերի միջև պիտի հարմոնիա, ներդաշնակություն լինի: Որքան շուտ կառավարողները հասկանան դրա անհրաժեշտությունը, այնքան անցավ կլինի փոխակերպումը, իսկ որքան ուշ հասկանան, այնքան կոնֆլիկտային և ցավոտ ընթացք կունենան փոփոխությունները: Այսօրվա աշխարհում կառավարման համակարգի փոփոխություններն առարկայացել/առարկայանում են հետևյալ հարթություններում.

1. պետություններն իրենց հոժար կամքով հրաժարվում են պետական կառավարման բազմաթիվ ֆունկցիաներից, դրանք իրականացնելու լիազորությունները փոխանցելով անդրազգային մակարդակ: Իսկ անդրազգային մակարդակն ունի երկու ձևաչափ.

   ա. պետական կառավարման համակարգի կողմից ստեղծված,
   բ. հասարակական, ոչ պետական կառույցների կողմից ստեղծված,

2. ռեգիոնալ կառույցների ձևավորում՝ պետությունները հասկանում են, որ իրենց հարևանների հետ, որոնք ունեն զարգացածության գրեթե նույն մակարդակը և առնչվում են գրեթե նույն խնդիրներին, ռեգիոնալ միավորումներ ձևավորելով ավելի հեշտ կպատասխանեն մարտահրավերներին,

3. ներպետական ապակենտրոնացում՝ ձևավորվել է ըմբռնում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին որոշակի լիազորություններ փոխանցելն ավելի ճիշտ և արդյունավետ կառավարման մեթոդ է, քանի որ ձևի և բովանդակության ներդաշնակությունը ներքևում ապահովելն ավելի հեշտ է, քան ֆեդերալ կառավարման մակարդակում, ուր պարզապես հնարավոր չէ ճշտորեն հասկանալ, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում: Հետևաբար, որոշակի ֆունկցիաների հանձնումը ստորին օղակներին, ճիշտ է:

Ժամանակակից կառավարման համակարգերում այսպիսի զույգ տենդենցներն այլևս իրականություն են: Հիմնական խնդիրը, որ դեռևս բանավեճի առարկա է և որի շուրջ չկա կոնսենսուս, քաղաքական կառավարման համակարգերն են և լուծումներն այդ ոլորտում: Կա Չերչիլյան հայտնի բանաձևը, որ դեմոկրատիան կառավարման վատագույն ձևն է, բայց դրանից ավելի լավը չեն հորինել: Այդպիսին է այսօրվա իրավիճակը, մենք առաջնորդվում ենք դրանով և իսկապես, կառավարման ավելի լավ ձև դեռևս հորինված չէ, բայց, մյուս կողմից էլ, մարդկությունն արագորեն գնում է դեպի խորը ճգնաժամ, այդ թվում և պետական կառավարման համակարգի: Ուստի, կարծում եմ, որ ինչպես անցյալ դարասկզբին խորը ճգնաժամից հետո ստիպված եղան

նոր տիպի կառավարման միավորներ ձևավորել, անխուսափելիորեն նույնը պետք է տեղի ունենա այսօր, որովհետև հասկանալի է դառնում՝պոպուլիզմն իսկապես վտանգավոր է, վտանգավոր է այն առումով, որ հասարակություններին իրականության մեջ ոչ թե օգուտ, այլ վնաս է հասցնում: Այդպիսով պրոբլեմների լուծումները հետաձգվում են, դրանց փաստարկված բացահայտումը, որն ավելի շատ մասնագետների խնդիրն է, մղվում է երկրորդ պլան, և այստեղ հառնում է վերևում արծարծված հարցը՝ որն է այն եզրը, այն սահմանը, որի մեկ կողմում դրվելիք հարցերը պետք է հանձնվեն նեղ մասնագիտական լուծումների, իսկ մյուս կողմում եղածները պետք է մնան քաղաքական կառավարման դաշտում: Որպես հիպոթեզ ու բանաձև քննարկվում է իրողությունները գլոբալ զարգացումների տիրույթում գնահատելու մոտեցումը. ժամանակակից աշխարհը փոխվում է շատ արագ և կացութաձևն է փոխվում, հետևաբար, երբ ձևավորվում է նոր կացութաձև, սակայն շարունակում է գործածության մեջ մնալ հին կացութաձևին բնորոշ կառավարման համակարգը, պետք է հիմնավորապես պարզել, թե ի՞նչ է նոր կացութաձևը, ինչո՞վ է տարբերվում իրեն նախորդող կապիտալիստական կացութաձևից: Նախորդող կացութաձևի էությունն այն է, որ հասարակության զարգացման հենքը տնտեսական համակարգն է, որի հիմքում էլ ընկած են շուկայական հարաբերությունները, ուստի պետք է ձևավորվեն ազատ մրցակցային հնարավորություններ, որպեսզի ուժեղները հաղթեն: Այդտեղից էլ կառավարման համակարգի բովանդակությունը, թե այն պետք է ապահովի ազատ, արդար, հավասար մրցակցային պայմաններ: Այն, ինչ տեղի է ունենում, ի ցույց է դնում, որ մրցակցային այդ կոնցեպտն արդեն հնամաշ է, որովհետև այլևս ի հայտ են գալիս նոր իրավահարաբերություններ, որոնք շատ ավելի կարևոր են, քան ապրանքների արտադրության բնագավառում իրար հետ մրցակցելը: Եթե կապիտալիստական հասարակարգում դա ամենաէական բազիսային գործընթացն է, որովհետև ապահովում է արդյունավետություն, նվազեցնում է ինքնարժեքը, ավելի շատ ապրանքներ են արտադրվում ու մրցակցային ցիկլերն էլ բավականին երկարատև էին (ասենք, երբ ի հայտ էր գալիս նոր մեքենա, արտադրության նոր ձևով, ինչպիսին էր, օրինակ, Ֆորդը, որը հեղափոխություն կատարեց աշխատանքի բաժանման իր կոնցեպտով ու կազմակերպման խիստ արդյունավետ ձև ստեղծեց, մրցակիցներին իրեն ու իր գրանցած արտադրողականության մակարդակին հասնելու համար առնվազն մի 15 տարի էր պետք), ապա այսօր աշխարհը փոխվել է և շուկայում հայտնվող յուրաքանչյուր նոր ապրանք, մրցակիցներից 15-ի փոխարեն մեկ տարի, 6 ամիս կամ ավելի քիչ ժամանակ է պահանջում: Պատճառը՝ ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխությունն այնքան արագ է զարգանում և այնքան արագ առաջարկում նոր լուծումներ, որ ովքեր վերցնում են այդ գիտելիքները և արդյունավետորեն կիրառում, նրանք կարողանում են այդ արտադրական ցիկլերը կրճատել: Արդյունքում՝ գիտատեխնիկական հեղափոխության ազդեցության ներքո կրճատվում են նաև մրցակցության ժամկետները: Բայց դա չէ կարևորը, ամենակարևորն ավելի ֆունդամենտալ մի բան է, այն, որ տեղի է ունեցել՝ բազիսային գործընթացի փոփոխություն: Եթե դասական կապիտալիստական հասարակության բազիսային հենքն ապրանքների արտադրությունն է, որի շուրջ ձևավորվում են մնացած իրավահարաբերությունները, որոնք պետք է ապահովեն ազատ շուկայական մրցակցության խաղի կանոններ, ապա հիմա պարզվում է, որ այդ բազիսային գործընթացը փոխվել/փոխվում է՝ անսպասելիորեն և արագ: Բազիսային գործընթացն այլևս նոր գիտելիքների արտադրությունն է ու ժամանակակից է համարվում ոչ թե շատ ապրանք, այլ շատ նոր գիտելիք արտադրող պետությունը: Մրցակցությունն այդ դաշտ է տեղափոխվել, որտեղ առավելություն են ստանում համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելու կարողություն դրսևորած պետությունները, այն պետությունները, որոնք սպասարկում են գիտելիքի ստեղծումը:

Հասարակության կառուցվածքի բովանդակությունը փոխվել է, ժամանակակից հասարակությունների բոլոր հարաբերությունները մղվում են այդ խնդրի լուծմանն ու սպասարկմանը, հետևաբար, ուզենանք, թե՝ ոչ, պետք է նկատի առնենք, որ այդ ֆունդամենտալ կոնցեպտը լիքը փոփոխություններ է բերում, գաղափարախոսական, բովանդակային փոփոխություններ, ու քանի որ ամենակարևորը նոր գիտելիքի արտադրությունն է, ուրեմն, չափազանց կարևոր են ենթակառուցվածքները, որոնք դրա հնարավորությունը տալիս են: Բայց կարևորագույն ռեսուրսը, տվյալ դեպքում, մարդն է, նրա մտածողությունը, նրա ինտելեկտուալ պոտենցիալը: Այդ պատճառով է, որ խնդիրը լուծելու հարցում կրթական համակարգերի դերը դառնում է ֆունդամենտալ. մրցակցությունն այլևս այդ դաշտում է, թե ում կրթական համակարգն է ավելի էֆեկտիվ: Այլևս ապրում ենք դարաշրջանում, երբ այդ տրանսֆորմացիան ընթացքի մեջ է: Տեսնում ենք, որ այս առումով Միացյալ Նահանգները հաղթում է բոլորին՝ աշխարհի լավագույն համալսարանները նրանցն են, լավագույն գիտահետազոտական կենտրոններն ու լաբորատորիաները նրանցն են, նրանք ստեղծել են համապատասխան ենթակառուցվածքներ, ֆոնդեր, որոնք սպասարկում են գիտությանը: Ֆինանսական միջոցները հայտնվել են գիտության կողքին, բիզնեսմենները սիլիկոնյան հովտում հոտոտում, որոնում են նոր միտք՝ գողանալու, նոր գաղափար, որպեսզի վերցնեն ու միանգամից տեղափոխեն նյութական արտադրության դաշտ: Առաջին անողը շահելու է: Այս բնական զարգացումը նպաստեց այդ ենթակառուցվածքների ստեղծմանը՝ համալսարաններում ու լաբորատորիաներում ֆունդամենտալ գիտությունը և կիրառական գիտությունն այլևս իրար հետ են, նրանք սնուցվում և փողեր են ստանում ֆինանսական շուկայից, որը հասկանում է՝ այդտեղ են ձևավորվում նոր գերշահույթները, որովհետև շահույթը, եթե նորամուծություն եք ապահովում, շատ ավելի բարձր է, քան, ասենք, iPhone-ի արտադրության մեջ: Նկատենք, որ iPhone-ը մրցակցում է և շահութաբերության մակարդակն էլ սուր մրցակցության պատճառով շատ ցածր է, իսկ եթե բացում եք նոր օվկիանոս, ապա անպայման շահում եք: Կա այդպիսի կոնցեպտ **«Стратегия голубого океана»**, ըստ որի, նոր օվկիանոս է ստեղծում նա, ով նոր գաղափար է բերում, առաջինը հաղթելու է, գերշահույթներն ինքն է ստանալու, մնացածն ուշանալու են: Ֆինանսիստները դա հասկանում են և այդ պատճառով էլ հայտնվել են ռիսկային դաշտում, համարելով, որ եթե 10 պրոյեկտից մեկն անգամ հաջողվի, դա արդեն մեծ հաղթանակ է: Իրենց սկզբունքը հետևյալն է՝ եթե հայտնվել եք սիլիկոնյան հովտում, պետք է սովորեք տանել պարտությունները, որովհետև պարտություններն ավելի հաճախակի են, քան հաղթանակները՝ 10-ից 9-ը պարտություն է լինելու, բայց այդ մեկը, երբ հաղթեք, դրանով նոր օվկիանոս եք բացելու և մտնելու եք որակապես նոր ասպարեզ:

Այս նոր միջավայրը ձևավորում է նոր կացութաձև, հասարակության կառավարման նոր համակարգ է ձևավորում, երբ այլևս կառավարման ձևերը պետք է համապատասխանեն էությանը, բովանդակությանը, իսկ այս խորապատկերին առարկայանում է համաչափության ապահովման պահանջը, որպեսզի կառավարման համակարգը համարժի արդյունավետ: Քանի որ այսպիսի խորը փոփոխություններ են տեղի ունենում աշխարհում, ուրեմն հիպոթեզը, թե ինչպես հաղթահարենք ժամանակակից կառավարման համակարգի պրոբլեմը, բանաձևը հետևյալն է՝ պետք է նորովի կրթել հանրությանը, իսկ այդ նպատակով համապատասխանաբար փոխել կրթական համակարգը, ստեղծել նոր կացութաձևին աdeկվատ նոր քաղաքացի: Բայց այս հիպոթեզը ևս ունի քննադատներ, որոնք փաստարկում են՝ մինչ կարվեն կրթական համակարգի ռեֆորմները, իսկ կրթական համակարգում ռեֆորմներ անելը հեշտ չէ, որովհետև պետք է նորը ստեղծել, իսկ հինը զուգահեռ դեռ պետք է գոյատևի, «հին» համարվող մարդիկ դեռ պիտի ապրեն, աշխատեն, իսկ այդ պայմաններում ինչպե՞ս է ողջ հասարակությունը կրթվելու, մանավանդ եթե

նկատի առնենք, որ ժամանակակից աշխարհի ամենակարևոր հատկանիշներից մեկն արագ փոփոխություններն են։ Մինչ ինչ-ինչ գիտելիքներ փոխանցվեն ժամանակակից հասարակությանը, որը դեռ ամբողջապես պարզ էլ չէ, թե ինչ է ու ինչ ու ինչպիսին է լինելու, այդ գիտելիքը հնանալու է, որովհետև հասարակությունն արագ է փոխվում, ուստի մարդկանց պետք է ոչ թե գիտելիք տալ, այլ ինքնուրույն սովորելու հմտություններ։

Առաջանալով դեպի ամփոփում, նկատենք՝ բոլորը համամիտ են, որ նոր կացութաձևը և հասարակությունը միմյանց հետ անտոգոնիզմի մեջ են։ Մեզնից շատերը (ես սովետական մարդ եմ), ԽՍՀՄ-ում են ծնվել, սովետական կրթություն են ստացել և այլն, հետո եկել է ուրիշ սերունդ, իսկ աշխարհն ընդհանրապես արդեն ուրիշ տեղ է հասել, ԽՍՀՄ չկա, հին համակարգ չկա, մենք ապրում ենք, ունենք մեր արժեքային համակարգը, որը մեր մեջ դրված է՝ մեր ծնողներն են դրել, միջավայրն է դրել, դաստիարակությունն է դրել, մեր մտածողությունն ունենք, ինչ-որ առումով կոնսերվատիվ ենք, շատ փոփոխություններ դժկամությամբ ենք ընդունում, թեպետ գիտակցում ենք, որ դրանք անհրաժեշտ են, առանց դրանց հնարավոր չէ ժամանակակից կյանքը. օրինակ՝ ես չեմ սիրում ինտերնետ, չեմ սիրում կարդալ համակարգչով, սիրում եմ գիրքը գրքի տեսքով կարդալ և այլն, բայց ինչ կարող եմ անել՝ ոչինչ, ստիպված ողջ օրը համակարգչի առջև եմ նստած։ Նոր սերունդը հակառակն է, չես կարող ստիպել գիրք կարդան, նախընտրում են նույն գիրքը, նույն բովանդակությունը գտնել ու ընթերցել համակարգչով։ Արձանագրենք, տեսնում ենք՝ առաջին, որ հնի և նորի միջև առկա է բնական դիմակայություն, երկրորդ՝ արագ փոփոխություններ, որոնց տեմպը չի նվազում, այլ ընդհակառակը՝ ուժգնանում է և երրորդ՝ կա անորոշություն։ Ոչ ոք չգիտե, թե վաղն ինչ է լինելու, եթե դիտարկենք համաշխարհային քաղաքական օրակարգը, կտեսնենք, որ ոչ ոք չի կարողացել կանխատեսել ակտուալացած առաջնային խնդիրները՝ ոչ արաբական գարունն է կանխատեսվել, ոչ ISIS-ի ի հայտ գալը, երբ երկու շաբաթվա ընթացքում ամերիկացիների աչքի առաջ առաջացավ ուժ ու զրավելով նրանց վերահսկողության տակ գտնվող երկրի 2/3-ը, ստեղծեց ինչ-որ անհասկանալի պետություն։ Այդպիսի հարց միջազգային օրակարգում չկար …….. ապագան էլ է այդպիսին լինելու, այսինքն՝ անորոշությունը մեծանալու է։

Ուստի վերադառնանք այնտեղ, որտեղից սկսեցինք, ինչպիսի՞ն պետք է լինի ժամանակակից կառավարման համակարգը, որպեսզի ադեկվատորեն պատասխանի այս և գոյանալիք մարտահրավերներին։ Բոլորը համարում են, որ հինը սպառել է իրեն, բայց նորի շուրջ չկա մեծամասնության համար ընդունելի որևէ հիպոթեզ։ Մենք կանգնած ենք ողբերգության, աղետի առջև, ոչ թե ճգնաժամ, այլ ողբերգություն է լինելու։ Հիմա դրա մասին գրում են բոլորը, վերցրեք ֆուտուրոլոգիայի բնագավառի բեսթսելերները, ոչ մի օպտիմիստական գիրք չեմ հայտնաբերել, մեկը մյուսից վատն է։ Մեկն ասում է, որ կիբեր մարդիկ են հայտնվելու, և քանի որ ժամանակակից առողջապահությունը մարդուն առողջ և երիտասարդ պահելու ֆանտաստիկ արդյունքների է հասել, (բայց դա, իհարկե, շատ թանկ արժե, և արդիականացող առողջապահությունը հասանելի չի լինելու ճնշող մեծամասնությանը), ուստի ձևավորվելու է մարդկության մի կաստա, որն ինքն իրեն շատ լավ է նայելու, նույնիսկ իր գեներն է թարմացնելու, գեների միջից վերացնելու է բոլոր հիվանդությունները, ու գիտության շնորհիվ ձևավորվելու է ժամանակակից սուպեր մարդ, բայց մեծամասնությունը, որին ղեկավարելու է փոքրիկ կաստան, այդ հնարավորությունը չի ունենալու։ Ոչ մի լավ բան այստեղից դուրս չի գալիս։ Մյուսի ֆուտուրոլոգիան հետևյալն է՝ քանի որ իմպլանտների գործածության մասշտաբներն անհավանականորեն մեծանում են, գալու է ժամանակը, երբ չի հասկացվելու, թե ով է իսկական մարդը, ով՝ արհեստականը, որովհետև

ապրում ենք այնպիսի աշխարհում, երբ ռոբոտի մեջ դնում են մարդու որոշակի էլեմենտներ, իսկ մարդու մեջ՝ռոբոտի: Ու քանի որ գիտությունը շատ արագ է զարգանում, գալու է մի պահ, երբ քո մեջ լիքը բաներ են դնելու՝ ընդհուպ մինչև հիշողություն՝ ուղեղի այս կամ այն հատվածի աշխատանքները կարգավորելու համար, քո կյանքը երկարեցնելու են, բայց արդեն չեն հասկանալու, դա մարդ է, թե՝ ռոբոտ: Քանի որ դա վերաբերելու է փոքր խմբի, ձևավորվելու է այնպիսի նոր Homo Sapiens, որը վերցնելու է իշխանությունը և կառավարելու է աշխարհը: Կան ֆուտուրոլոգիական այսպիսի տարբեր վերլուծություններ, որոնք գիտական հիմքի վրա են արվում, այսինքն՝ վերցնում են ժամանակակից գիտության զարգացման բոլոր միտումները և փորձում կանխատեսել, թե դա ուր է տանելու և ինչպես է ավարտվելու: Դրանով պայմանավորված, այսօր լուրջ քննարկման առարկա են դարձել բարոյաէթիկական խնդիրները:

Իսկ դրա հետ կապված ինչ հարցեր են քննարկում գիտնականները. արդյո՞ք պետք է միջամտել և արգելել ուսումնասիրություններն ու հետազոտությունները որոշակի բնագավառներում, որոնք վերաբերում են մարդու էությանը, և կա, արդյո՞ք, ինչ-որ եզր, որից այն կողմ մարդն իրավունք չունի անցնել: Կան գիտնականներ, որոնք ասում են՝ պետք է այդ գիծը քաշել, այլապես գնում ենք կործանման, և կան գիտնականներ, որոնք ասում են՝ դա անհնար է, դա կլինի արհեստական, որովհետև միևնույնն է, մարդու միտքն այնպիսին է, որ վաղ, թե ուշ կգտնի շրջանցելու և այդ ոլորտում հետազոտությունները շարունակելու ձևերը: Խնդիրների այս շրջանակի պատասխանը նոր սերունդը պետք է գտնի, թե ձևով ինչպիսին պետք է լինի էությանը համահունչ ժամանակակից կառավարման համակարգը, որպեսզի ձևի և բովանդակության միջև խզում չառաջանա: